



## ՄիաՄանթո

### Նալասարդեան աղօթք առ Դիցուհին Ահանհիտ

Ո՛վ Դիցուհի, ես մեղկութեան կրօններէն ահա իմ խիղճս լուացի  
Ու պերճօրէն դեպի գՔեզ կը քալեմ: Հողաթափներս դեռ սուրբ են:  
Բա՛ց մարմար դուռը մեհեանիդ, անոր դիմաց ես ճակատդ թող արհունեմ...  
Բա՛ց բագինըդ եւ տո՛ւր ինձի շէկ գօրութիւնը Արտաշեսեան նախնիքներու...:  
Լսէ՛ ինձի, Ոսկեղէն մա՛յր, քո՛յր արգասանդ, քո՛յր բարութեան,  
Առատութեանց պարգեւիչ եւ Տիրուհիդ հին հայոց,  
Նալասարդի առաւօտով Քու նախկին ցեղդ ահաւասիկ կը ցնծա՛յ...  
Թոյլ տուր որ ես, ծնրադիր՝ ձեւիդ առջեւ աղօթեմ...:

Լսէ՛ ինձի, Հրաշքի՛ Վարդ, ոսկի ոտքով աստուածուհի,  
Գիշերային սպիտակ Հարս եւ Տարփուհիդ Արեգական  
Եւ լուսամարմին մերկութիւն Արամագդեան Առագաստի,  
Արեւն իր մէկ ճառագայթով թո՛ղ քու բագինդ դարձեալ վառէ...:  
Կը հաւատամ ես ի Քեզ: Բագրեւանդեան բլուրներուն վրայ կանգուն,  
Ես՝ բագնադարեան դիցապաշտ եւ նիգակազէն քու որդիդ,  
Իբր առաքեալ եւ խնդրարկու Քեզի կու գամ վեհօրէն,  
Լսէ՛ ինձի, Հայկեան բամբիռս Գողթան հողէն է ծներ...:

Ուխտի կու գամ: Քղամիդ մը հասակէս վար եւ բարսամունքի դալար ոստեր ի  
ձեռիս,  
Ահաւասիկ արծաթ ցնցուղ մը վարդահիւթով՝ ստինքներդ օծելու...  
Ահաւասիկ խնկաման մը սափորածեւ, ուր կործանումդ իմ արցունքո՛վս ես  
լացի...

Եւ ստուերիս հետետող եղնիկներով նուիրական՝ Քեզ կը քալեմ...:  
Բագրեւանդեան բլուրներէն հեթանոս կեանքը հոսի,  
Արետորդիք գեղահասակ, բեհեզներով պարեգօտուած,  
Աղեղներու, նիզակներու եւ նետերու վարժէն յետոյ, գոհարանիդ սեմին վրայ  
Յաղթ ցուլերու պարանոցին իրենց սուրերը թո՛ղ սեւեռեն...:

Թո՛ղ պտղաւորեալ հայ հարսներուն ուսերէն յստակ տարմը տատրակներուն  
Դէպի անդրիդ թոհչ առնեն: Վարդավառի ջրախաղերը թող բացուի՛ն...  
Եւ վեշտասնամեայ աղջիկներ բագինիդ շուրջ պարի ելած,  
Իրենց մարմինը մոգական, ո՛վ գգաստութեանց Տիրամայր, թող քե՛զ բաշխեն...  
Քսան դարու Քու վրէժդ թո՛ղ որ այսօր ես լուծեմ,  
Ո՛վ աստուածուհիդ Անահիտ: Ահաւասիկ քու բագինիդ կրակներուն մէջ նետեցի  
Իմ խորտակուած խաչափայտիս երկու թերերը թունաւոր,  
Եւ ցնծա՛ դուն, ո՛վ Ոսկեմայր, Լուսաւորչի կողերէն, ժանտ ոսկոր մը քեզ կը  
ծխեն...:  
Կը պաղատիմ ես Քեզի, ո՛վ գօրութեանց Դուն աներկրորդ Գեղեցկութիւն...  
Դուն Քու մարմինդ արեգակին ընծայելով՝ բեղմնաւորուէ անոր Տարրէն  
Եւ անյաղթելի ահեղ Աստուած մը պարգեւէ դուն Հայութեան...  
Քու աղամանդեայ արգանդէդ, ո՛վ Դիցուհի, ահեղ Աստուած մը ծնանէ՛ մեզ...: